

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մի պարագոքս անհատի և ժողովրդի մէջ. — Երկու հիմնական աշխարհային ցողոթիւն. — Մեր ինտելիգէնսների երեք կատեգորիան. — Դ Գաբրիէլ Միրզուեանց. — Թիֆլիսի քաղաքալին խորհրդարանի նոր կազմը. — Բաղուկ քաղաքագլուխը և դուման. — «Բակу» լրագիրը.

Պաշտօնական հաղորդագրութիւններ

Մի տարօրինակ համեմատութիւն կարելի է անել անհատների մահացման և ժողովուրդների երկարակեցութեան մէջ. այդ համեմատութիւնը առաջին հայեացըցից թւում է անհաւատալի, զարմանալի, պարագօքսալ, բայց եթէ մի քիչ մտածէք, կը տեսնէք որ այդ պարագօքսը իսկապէս ճշմարտութիւն է. որոշ անհատների մահուան և դրանց ծնող ժողովուրդների երկարակեցութեան մէջ մի յարաբերութիւն կայ, որքան շատ են մի ժողովրդի կեանքում հասարակական գործիչների մահեր, այնքան կենսունակ է այդ ժողովուրդ, այնքան երկարատև է այդ ժողովրդի գոյութիւնը և յուսալի նրա ապագան. Եւ այդ հասկանալի է. երբ մեռնում են (անխուսափելի վիճակ թէ հասարակական գործիչի և թէ ինքն իր համար ապրողի) հասարակական առաքինութիւններով օժտուած անհատներ՝ զըրանք թողնում են ժողովրդի մէջ իրանց էութեան լաւագոյն կողմերը, իրանց էներգիայի և ոգեւորութեան ստեղծած գործերը. այդ բիւրնզացած էներգիան և ոգեւորութիւնը, մտնելով ժողովրդի օրգանիզմի մէջ, թարմացնում, ուժիղացնում, բարոյացէս բարձրացնում է նրանու եւ ինչքան շատ են հասարակական գործիչները, այնքան շատ է մտնում ժողովրդի օրգանիզմի մէջ զրանց էներգիայի և ոգեւորութեան ստեղծած մտաւորաբարոյական պաշարը, այնքան ընդունակ է դառնում մի ժողովուրդ հաւաքական կեանքի համար, այնքան ուժեղանում է նա գոյութեան դաժան կոռի համար. Ուրեմն, ժողովրդի հասարակական առաջադիմութեան տեսակէտից անհետեւանք չեն կոր-

շում նոյն-իսկ համեստ զործիչների ջանքերը, որովհետև ՀԱՆց
այդ համեստ որդերի միացած ջանքերով է կամաց-կամաց կեր-
պարանափոխութեամ մի ժողովրդի մասուր-բարոյական աշխարհը:

Անշուշտ, շատ ափսոսալի է, երբ զործիչը վազածում է
իշխում ասպարեզից, առկայն, այնուամենացնիւ, առելի միջիմա-
րական է այդ, քան եթէ մի ժողովուրդ անկարսոց լինէր տալ իր
միջից այդպիսի կորուսաներ և մնաք միշտ ականառեն լինէնք
միայն այնպիսի անձերի շքեղ յուզարկաւորութիւններին, որոնք
իրանց կեանքում եղել են լոկ իրանց աստուածացրած եսի ու
ընտանիքի համար աշխատող զիշտափներ:

Բոլորս զիտենք՝ որ անվերջ յաւիսենականութիւննից մոր-
դուս տրւում է գոյութեան մի շատ կարճ ժամանակամիջոց,
բայց այդ կարճ գոյութեան համար տաև ինչ ստորութիւն-
ների և չարագործութիւնների ընդունակ չէ մարդ...

Եւ այդ բոլոր զարշութիւնները արդարացւում են շատ
տարածուած մի գործնական փիլոսոփայութեամբ. ԱՄԻ և Նոյն է,
քանի որ ես մի ժամանակաւոր հիւր եմ, յաւիսենականութեան
մէջ միայն մի կարճ վայրիեան պէտք է տպրեմ, ուրիմն,
թռող լաւ ապրեմ, վայելիս կեանքի բոլոր բարիքները, թէկուզ
դրա համար ստիպուած լինեմ գոյութեան կուռւմ զիշտափ
լինել ուրիշների նկամամբ, որոնք իրանց կողմից նոյնկերպ են
նայում ինձ վրայ, իսկ ինձնից յնառոյ—թէկուզ ջրհնեղեղ...

Ահա այդ գործնական փիլոսոփայութեան գուանանքը:

Եւ ժամանակակից հասարակական պայմանները հինց այդ-
պիսի փիլոսոփայութիւն են թեկագրում Այդ զործնական փի-
լոսոփայութիւնը աւելի ևս ուժիգացաւ այն օրից, երբ մի կող-
մից թուլացաւ մարդկանց մէջ հաւատը դէսփի հանդերձեալ
կեանքի թէ երջանկութիւնը և թէ պատիմը. իսկ միւս կող-
մից՝ սաստկացաւ գոյութեան կոփւը:

Մի ժամանակ մարդիկ յանձն էին տանում զնկանքներ,
բարեգործութիւններ էին անում, յաճախ նոյն-իսկ անձնազուու-
թեան հոյակապ օրինակներ ցոյց տալիս՝ լոկ յաւիսենական վար-
ձատրութիւն ստանալու յաւով. մի ժամանակ գժողքի սար-
սափները զազում էին մարզու մէջ նստած զազանին. Այդով-
սով, լաւագոյն կեանքը զրախտում կամ զժողիքի սարսափները
ստիպում էին նրան բարեգործ և առաքինի լինել Սակայն ի-
րական կեանքի խիստ պահանջները ստիպում էին այդ սարկանու-
զի մարդկանց յաճախ զիմնել խորամանկութեան, կեզծիքի, դրանք
ձգուում էին արտաքին բարեկաշտութեամբ կամ հոգեւորակա-
նութիւնից գնած բարեխօսութիւններով կաշառել նոյն-իսկ
Աստուծունն Պարզ է որ երկնքի հետ սկսուած այդ առեւտուրը

ոչ մի առնչութիւն չունէր բուն քրիստոնէութեան հետ և մի կոպիտ կեղեւ էր, որ մազաշափ չեթ փոխում վերև լիշած գործնական փիլոսոփայութեան ծուծը կեանքի էութեան մասին:

Բայց նոյն իրողութիւնը որ յաւրականութիւնից մարդուս տրուած է գոյութեան մի կարճատեւ մօմենտ, կարող է հիմք լինել և արամագծօրէն հակառակ, ոչ էգօստական, այլ ալտրուիստական փիլոսոփայութեան, որ հիմնուած չէ երկիւղի կամ վարձատրութեան սկզբունքների վրայ, այլ բղխում է մլտքով պտջառացած կատարեալ մարդու ամբողջ էութիւնից: «Աւելի լաւ չք իմ կարճատես գոյութիւնը ես նուիրեմ երկրիս վրայ մնացողների և գալիք սերունդների կացութիւնը բարուռքելու վեհ գործին. զարհուրելի է թշուառ մարդկութեան անցեալը, գժբախտ է նրա ներկան, թող բախտաւոր և պայծառ լինի նրա ապագան. ուրեմն, այդ ապագային հասցնելու համար անեմ այն, ինչ թոյլ են տալիս ինձ իմ ոյժերը. իսկ զիտակցութիւնը, թէ ես լաւ գործ եմ կատարում, կը տայ ինձ գոհունակութիւն, և այդ ինձ համար բաւական է»:

Ահա փոքրամասնութեան, բայց մարդկութեան լաւագոյն, իդէալիստ փոքրամասնութեան աշխարհայեցողութիւնը:

Մենք վերև ասացինք թէ պէտք է մարդով պայծառանալ այս վերջին փիլոսոփայութեան յարելու համար. Հետեւաբար, որոյ ինտելիգենտութիւն է պահանջւում մարդուց՝ գործելու համար, անսալով միայն իր հոգու ներքին ձայնին, առանց մի րոպէ մտածելու վարձատրութեան կամ պատմի մասին: Եւ մարդկային երջանկութեան համար թէ երազող և թէ աշխատող բոլոր նշանաւոր անհամաները գործել են այդ ուղղութեամբ, մղուելով մի վեհ, անբացատրելի ներքին բնագրով դէպի ճշմարտութիւն:

Անպատճառ հանձար պէտք չէ լինել այդ փիլոսոփայութեան հետեւող լինելու համար. նաև համեստ գործիչների մէջ նստած է լինում այդ ողին, ինչպէս այդ տեսնում ենք նորերս վախճանուած Գաբրիէլ Միքայելանցի օրինակի մէջ: Սակայն, հանգուցեալ գործիչի արժանաւորութիւնները աւելի լաւ ըմբռնելու համար, մենք նախ փորձենք ծանօթանալ մեր ինտելիգէնտների հետ առհասարակ:

Մեզ թւում է թէ՝ մենք սխալ գործած չենք լինի, եթէ մեր ամբողջ ինտելիգէնցիան բաժանենք երեք կատեգորիաների.

Առաջին կատեգորիային պատկանում են մեր այն ինտելիգէնտները, որոնք առանց քաշուելու համարձակ խոստովանուած են, որ իրանք, ընկճուելով կեանքի մէջ գերիշող պայմաններից, չեն կարող լող տալ հոսանքի դէմ, և լաւ ապրելու համար պէտք է յարմարուեն տիրող կարգերին. իսկ եթէ ու-

առնողութեան ժամանակ իրանք ոչ համազար նվաճեր կուտ զա-
զափարձեց ևն անեցել, այդ եղան է ազատական անփորձու-
թեան, միամտութեան նետանք... Այդ կառելորիային ևն պա-
կանուս մեր ինտելիգէնսների մեծագոյն մասը:

Երկրորդ կատեգօրիայի ինտելիգէնսները իսկապէս առելի
են անամսկրելի իրանց կնքեւթեամբ. դրանք խոցերով ի-
րանց արթատական և աշխատանքի չառաղայ ձեւացեաց.
գործով ամեն կերպ (չազ աժիս) ձգում են զանազան բանին և
այսուհետեւ ապրել մեծ կոմֆորտով Մեզանում զա ստորական
բան է թում և ոչ ոք չի զարմանում, երբ կնոջ աժիսով բան-
թիէ զառած պորտաբոյցը շարունակում է յաղուածներ և ուս-
նաւորներ զրել, վասարաներով աշխատանքի սկզբունքը, զա
տարտիքութիւն է միայն ոչ կրօնական, այլ անտեսական առ-
առողջութիւն:

Վերջապէս, երրորդ կատեգօրիային պատկանում են այն
սակաւաթիւ ինտելիգէնսները, որոնց անզօր է կեանքը ժաման
իր ուղածի պէս, զրանք, հաւատարիմ մնալով երիտասարդու-
թեան վեհ իդէալներին, չեն կարգանում այնպէս փոխուել, որ
միաժամանակ և մամնային և գաղափարին ծառայեն Անկարոց
լինելով յարմարանել կեանքը առորացնող պայմաններին, անկա-
րող լինելով հանոյանալ զանազան դիշատիչների պահանջներին՝
դրանք հարուածներ և հալածանք են կրում ժամանակակից հա-
սարակութիւնից, որը զրանց հակառին զրոշմում է արհամար-
հական շանաշողակներ և «իմենթեր» խօսքերը, Բայց այդ հաս-
ջողակներն ու «իմենթեր» այսուհետեւ շարունակում են
տառապէլ՝ նոյն հասարակութիւնը բարձրացնելու, ազնուացնե-
լու համար:

Չը պէտք է կարծել, որ այս վերջին կատեգօրիային պատ-
կանում են հէնց այն գործիչները, որոնց անունը հրապարակի
վրայ է և ամեն կողմից լւում է. Ոչ նայեք ասազազարդ եր-
ինքի վրայ, առաջին անգամից ձեզ այնպէս է թւում. թէ հէնց
այդ փայլուն աստղերն են, որ կան. բայց աւելի խորը թափու-
ցեք և կը նշմարեք սկզբում անհկատելի անհամար աստղեր, ու-
րմնք չատ հեռու են մեզնից և այդ պատճառով այնքան ել
փայլուն չեն—Այդպէս է և կեանքը, զաղափարական գոր-
ծիչներ կինտրօններից գուրս չատ կան. ամեն մէկը զրան-
ցից իր շարժ, իր ասպարիզում լրյու է սփռում. բարի զործ է
կատարում, իսկ փայլուն են և երեսում լոկ մակերեւոյթի վրայ
գտնուողները. Այդ համեստ, անհկատելի գործիչները յանախ
մարտիրոսութեան, անհնազուութեան վեհ օրինակներ են ցոյց
տալիս, լւաւազոյն ապագայի ճանապարհ են հարթում. երրեք

չը մտածելով անուան, փառքի մասին, որ մնափառութեան հարազատ քոյրն է։ Դրանք են այն իսկական ալտրուֆստները, որոնց աշխարհայեցողութեան մասին քիչ առաջ խօսեցինք։ Դըրանք չեն գործում փառքի համար, «Թող կորչի անունը, մնայ գործ»—մտածում են դրանք, իսկ եթէ, այնուամենայնիւ, անուն, յարգանք, ուզեք և փառք, փաստակում են և դրանք—այդ լինում է հետեւանք և ոչ նպատակ...

Ահա այս վերջին կատեգորիայի համեստ գործիչներից էր Գաբրիէլ Միբզոյեանցը։ Որ հանգուցեալը աչքի ընկնող երեսյթ էր մեր հասարակական ասպարիզում, մեղ նման փաքրիկ աղլի կիանքում—այդ պէտք է պարզ լինի իւրաքանչիւրի համար, ով ընդունակ է առանց կանխակալ կարծիքի աչքի անցկացնել նրա, մանսւանդ, սկզբի 10-15 տարիների գործունէութիւնը։

Յաճախ կարելի է ինքնահաւան ապուչներից լսել այնպիսի գատողութիւն, որ նման է, կարծեմ, կուկին պատահած դէպքին։ Մի խնճոյքում հարց էր ծագել, թէ ով կարող է զիք կանգնեցնել ձուն, բոլորը փորձեցին և ոչինչ չը գուրս եկաւ։ Կուկը խիեց ձուն բութ ծայրով սեղանին և ձուն զիք կանգնեց։ «Այդ մենք էլ կարող էինք անել», լսուց ամեն կողմից։ Այդպէս է լինում։ Տարիների ընթացքում մի զգրոց ապուշանոց և անկելանոց է ներկայացնում։ մէկին, գիցուք, աջողւում է ձաղկած վիշակի դնել այդ գալրոցը։ Իսկոյն շուրջը լսում են բացականչութիւններ։ «Այդ մենք էլ կարող էինք անել։ Մի օրդան տասնեակ տարիների ընթացքում յիմարութեան, խարերայութեան, տափակութեան ու միմոսութեան կոյուղի է ներկայացնում։ գալիս են նոր մարդիկ, ամեն բան կերպարանափխուում է և գարձեալ լսում է։ «Այդ մենք էլ կարող էինք անել», և այն, և այն։ Այդպէս է լինում միշտ։ Այդպիսի բացականչութիւններ լսում էր և ներկայ դէպքում։ Փոխարէն ընդունելու, դնահատելու գործիչի արժանիքը—ողորմելի անափառները ուռած-գիրած իրանց քթերն են ոլորում և ինքնահաւան բացականչում։ «Ի՞նչ մի երեւելի գործ է արել, այդ մենք էլ կ'անէինք»...

Մեր համակրանքը դէպի համագուցեալը աւելի է բարձրանում, մանաւանդ, ի նկատի ունենալով այն միջնավայրը, որից նա գուրս եկաւ։ Անշուշտ, իւրաքանչիւրիս բնաւորութեան վրայ անփուսափելի կերպով ազդում է այն ընտանեկան հասարակական միջնավայրը։ Որի մէջ մենք լոյս աշխարհ ենք տեսում։ Եւ այդ միջնավայրը համարեա ինքնուրոյնութիւնից զըրկում է և տափակացնում սովորական անհատներին։ Միայն ընտրեալ անձնաւորութիւններն են, որ կարողանում են իրանց

միջնավայրի հանձից դուրս գալի Ազգական անձնաւորութիւն էր և Գ. Միրզոյեանցը:

Այն միջնավայրը՝ որի մէջ նա ծննդեց ու անցկացրեց իր մանկութիւնը և պատանեկութիւնը, ընդունաւոր էր թիֆլոփի ուժները, բռնծուական ու վրացախօս հայերի մեծամասնութեան համար, այդ մեծամասնութիւնը նաև այժմ շարունակում է հաւատարիմ նույն իրան արտադրող միջնավայրի մեջանական իդէալներին Գ. Մ. իր մանաւական առանձնարարկութիւններով միանգումայն արքեր էր իր շրջապատօղներից, նրա ուսունողական կենացը, ամսաւնութիւնը, ասպարեզ ընտրելը, հայրենասիրութիւնը, համարձակ զիրքը կուսակցական պայքարներում—այդ բալորը արամագծօրէն հակառակ էին նրան ծնող միջնավայրին յատակ նոզ հասկացողութիւններին։ Համալսարանում նա զիսպամ չէր որոշում, սիրոյ մէջ զիրք ու օժիու չէր փնտում, այլ սզեւորութիւն և զաղափարական համերաշխութիւն։ Իր գործունեաւունական համար նա շահաւետ կարիք չէր ջոկում, այլ ընտրում էր մի փշոս ասպարեզ, զէպի որը նրան մզում էր իր ներքին ձայնը, կոչումը և ժողովրդին պատակար լինելու իդէալը։ Միշտ կենսուրախ, շիտակ և հանգուունակ ուրախութեամբ էր իր ոյցները նույիրում հասարակութեան, բացի ուսուցչութիւնից նա պատուաւոր զեր էր կատարում և մեր գրականութեան մէջ, ոչ ոք չի ուրանայ, որ «Հրատարակական Ըսկերութիւնը», մանկական «Աղրիւր» ամսագիրը (Թողած՝ 1902—1903 թ. «Տարագը») իրանց փայտան սկզբնաւորութեամբ պարտական էին Գ. Միրզոյեանցի անձնուելը և կարող ջանքերին։

Բաֆիիի բարեկամը և զաղափարակիցը զիտէր սպիորել հասարակ ժողովուրդը, ինչպէս այդ ցոյց տուեց նրա կազմակերպած։ Բաֆիիի հասարակական թագումը, ինչպէս այդ հաստատեցին հոգաբարձական և կաթողիկոսական ընտրութիւնները իր շատ որոշ ուղղութեան և կօմպրօմիս չը սիրող բնաւորութեան համար՝ հանգուցեալը տառուած էր հայաստանեայց և զուիսներից, որոնք առիթթ բաց չը թողին հեռացնել նրան ներսիսնեան դպրոցից, թէև նա բոլորից վկայուած էր իրեն տաղանդաւոր մանկավարժ և օրինակելի ծառայող էջմիածինը երկար քաշքաց նրա գործը, մինչև որ արդարացի գոհացում տուաւ նրա պահանջին։ Սակայն նա այսուհետեւ երկար չը մնաց զպրոցական ասպարիզում, ծանր հիւանդութիւնը հեռացրեց նրան իր սիրած գործից, բայց նա անկարող էր ապրել առանց կենդանի գործի, և իր ծխական սկզբնեցում, մասամբ էլ քաղաքային գումարում, նա աշխատում էր մինչև վերջին շունչը։

Մի գործիչ, որ այդքան էլ կարողացել է անել մեր պայ-

մաններում, իրաւունք ունէր սպասել հասարակութիւնից անկազմ ափսոսանք իր վաղաժամ մահուան առիթով և պատկառանք ու յարգանք դէպի իր յիշատակը։ Այն ինչ նա կատարեց՝ կորած չէ հայ ժողովրդի առաջադիմութեան գործում։ Թող, ուրեմն, հայ ժողովուրդը աւելի շատ տայ իր միջից այդպիսի անհատներ։

Թիֆլիսի գումայի նոր կազմը արդէն սկսել է իր պարապունկները։ Առաջիկայ 1902—1906 քառամեակի համար ընտրուած 80 ձայնաւորներից 51 հոգի հայ են, 15 վրացի, 9 ռուս, 2 գերմանացի, 2 լեհ և 1 մահմետական։ Նշանաւոր է այն, որ ձայնաւորների մեծ մասը բարձրագոյն կրթութիւն ստացած անձինք են։ Թէ ինչ կատեգօրիայի ինտելիգէնցիաներ են քաղաքի այդ նոր «հայրերը», մենք չը զիտենք. ապագան ցոյց կը տայ մեզ այդ և անհաջող փաստերով։

Մեր տեսակէտը քաղաքային գործերի մասին մենք առիթ ենք ունեցել մի քանի անգամ պարզելու. հազիւ թէ շատ գետմօկրատիական ծրագրներ ընդունակ լինի իրագործել նաև ներկայ կազմը. յամենայն դէպս ցանկալի է, որ նոր հայրերը յիշեն, որ Թիֆլիսի կարիքներն ու պահանջները կենտրօնացած չեն միայն Սօլոլակի և Գոլովինեան պրօսպէկտի մէջ. իր օրական պարենը արիւն քրտինքով աշխատող մեծամասնութիւնը, որ ապրում է այդ կենտրօններից գուրս, չը պէտք է քաղաքակրթութեան բարիքների նկատմամբ խորթ զաւակ լինի։ Մեր անատերձայնաւորները արժանի կը լինէին հիացմունքի, եթէ զգացին, որ վարձով բնակարաններ տալու ներկայ ձեերը հեռու չեն վաշխառութիւնից. նրանք պէտք է աշխատեն Թիֆլիսում էլ բնակարանային հարցն այնպէս կարգադրել, ինչպէս այդ անւում է քաղաքակիրթ երկրներում... «Ինտելիգէնց» գումայից այդ աւելի մեծ իրաւունքով կարելի է սպասել, քան Բագուի գումայից, ուր գերիշող տարրը հաջիներից և անկիրթներից է կազմուած։ Դրանց խսկապէս գժուար է հասկացնել, որ քաղաքի մեծամասնութեան շահերը բոլորովին տարբեր են այդ գիշատիչ խօզէինների գրանային շահերից։ Հետեարար, բաւական մեծ եռանդ է պահանջւում Բագուի նոր քաղաքագլխից՝ իր հետ համաձայնեցնելու այդ ձայնաւորներին, որոնք փառաւորապէս գլորեցին նրա մի արգար առաջարկութիւնը՝ նորից գնահատել քաղաքի անշարժ կաքերը ու դրանց ներկայ խսկական եկամուտների համաձայն հարկ նշանակել, և այդպիսով աւելացնել քաղաքի հասոյթները։ Հաջիներն և ապերները գերադասում են հին սիստեմը. բարձել չունեղիների վրայ հարկային ամրող ծանրութիւնը և շարունա-

կել շնչարեան առկաներ սահմազ քրանով առած աներից։
Բզուր կը լինի քաղաքազիսի կողմէց զիման անոյ հաջիների
և ապերների արգարութեան զայտաւնքին և ազնութեան։ Այդ
անհաւկանութիւնը այբուրէն է դրանց համար։ Սակայն, այնուամե-
նային, քարոզել են, որ զիմաւորն է մարդացնել և մարտել այդ
գիշատիչներին, պէտք է, և այդ շանկանում է անել նույնի
մայրագույղառում նոր հրատարակուոց «ԵԱԿՅԱ ԱՐԴԳԻՐԸ» Յիշուի,
այժմ կարելի է բազուցիներին չնորդաւորել, որ վերջապէս
օրանք էլ արժանացան ունենալ մի շիտակ, անկախ օրգան, որ
հաւատարիմ նաև առաջ բաւագիր մամալի առաջարկ
անհենցիրաներին, պաշտպան է կանգնած լոյսին և ժաղավրդի
շաներին։ Խարութիւն չը զնելով ազգութիւնների մէջ, Խաչորէն
ցոյց են տալիս մեր ձեռքն հասած պատճին 25 համարները,
«ԵԱԿՅԱ» խմբագրուում է լուրջ, կենզանի և բազմակազմակեր
կերպով, և նրա մէջ արքապետող ոպին սթափեցնող է և ազ-
նիւ ի սրտ ցանկանում ենք աջողութիւնը թող աւելանուա
խաւարի և անարգարութեան դէմ մարտնչոց զբյի զինուոր-
ները!»

Լ. ՍԱՐԳՍՅԱՆ

22 նոյեմբ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին, կարսի
առման քանհինգտեայ յօրելմանի ասիթթավ, իր՝ նորին կայսե-
րական Մեծութիւն Թագաւոր Կայսրին ուղարկած հասպարին
ստացաւ հետեւեալ պատասխանը։ «Յ ա ն ձ ն ա ր ո ւ մ ե մ
ձ ե զ հ ա զ ո ր դ ե լ կ ա ր ս ի ա ռ մ ա ն ժ ա մ ա ն ա կ ո պ ա-
տ ե ր ա զ մ ո զ զ օ ր ա մ ա ս ե ր ի ո պ ա տ զ ա մ ա ս ո ր ն ե -
ր ի ն ե ւ կ ո վ կ ա ս ե ա ն զ պ ա տ ե ր ա զ մ ե ր ի ն մ ա ս
ն ա կ ց ո զ ա ն ձ ե ր ի ց ն ե ր կ ա յ զ ա տ ն ւ ո զ ն ե ր ի ն ի մ
ս ր ա տ ա զ ի ն շ ն ո ր հ ա կ ա լ ո ւ թ ի ւ ն ը՝ ո ր ա ն ց ա զ օ թ-
ք ն ե ր ի ե ւ ի ն ձ ա ր ա ս յ ա յ ա տ մ ձ զ զ ա ց մ ո ւ ն ք ն ե -
ր ի հ ա մ ա ր, ո ր ո ն ք ի ն ձ ա ն կ ե զ ձ օ ր է ն ո ր ա տ
շ ա ր ժ ե ց ի ն ։ Պ ա ր ծ ա ն ք ո վ ե ւ ե ր ա խ ա տ ա զ ի ա տ
կ ա ն զ զ ա ց մ ո ւ ն ք ո վ ե մ յ ի շ ո ւ մ կ ո վ կ ե ա ս ե ա ն
ք ա չ ա ր ի զ ի ն ո ւ ո ր ն ե ր ի փ ա ռ ա տ ո ր ս խ ր ա մ զ ո ր-
ծ ո ւ թ ի ւ ն ն ե ր ը կ ա ր ս ի ա ռ մ ա ն ժ ա մ ա ն ա կ ե ւ
ն ա ր ա ն ց պ ա տ կ ա ս ե լ ի զ լ խ ա տ ո ր հ ր ա մ ա ն ա տ ա ր